ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2017թ. երկրորդ եռամսյակ/

.

1. **Ստացվել են նամակներ ընդամենը**	**1079**
որից՝	
աջակցություն	1071
առաջարկություն	-
հարցում	4
բողոք	4
այդ թվում՝	
կրկնակի	16
կոլեկտիվ	*11*
2. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	5
կոմունալ-կենցաղային	18
շինարարական	17
արդձեռ/տրանսկապ/	2
գյուղատնտեսական	2
բնութ. պահպանութ	1
առևտրի	1
կենսաթոշակի և նպաստի	6
առողջապահության	48
կրթական և մանկ.հիմն	336
գիտութ.կուլտուրա	-
ֆինանսական	354
օրենսդրական	-
քաղ. և որդեգրման	2
աշխ.տեղ և հաշվառման	221
հողհատկացում և հողօգտ.	-
միգրացիոն ծառ. վերաբերյալ	-
ապարատային	45
այլ հարցեր	21

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2017 երկրորդ եռամսյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2017 թվականի երկրորդ եռամսյակում քաղաքացիներից ստացվել է 1079 դիմում, որից 1071-ը՝ աջակցության խնդրանքով, 4-ը՝ բողոք, 4-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 31 դիմումներին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 221 դիմումներից դրական լուծում է ստացել 21-ը, իսկ մյուսները վերցվել են հաշվառման աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 24 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 354 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 309 հոգու: Անվճար բուժսպասարկման հարցով դիմած 16 քաղաքացիներից բավարարվել է 11-ի խնդրանքը, 4 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 22 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2017 թվականի երկրորդ եռամսյակում կատարվել է 203 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: